

Համաձայնեցված է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

31 հունվար 2002 թ. N 29

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱԽԱՌՆ ԵԿԱՄՏԻՑ ՆՎԱԶԵՑՎՈՂ ԿՈՆՑԱԿԻ ՍՊԻՐՏՆԵՐԻ ԵՎ ԿՈՆՑԱԿՆԵՐԻ ԳԾՈՎ ՓԱՍՏԱՑԻ ԿՈՐՄՏԻ (ԲՆԱԿԱՆ ԿՈՐՄՏԻ) ՆՈՐՄԱՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ կառավարության 2000 թվականի փետրվարի 3-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թ. ապրիլի 29-ի N 272 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 48 որոշմամբ սահմանված կարգի համաձայն, հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցվող գույքի փաստացի կորստի (բնական կորստի) հարցերը որոշակիորեն կարգավորելու նպատակով

Հրամայում եմ`

1. Հաստատել «Հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցվող կոնյակի սպիրտների և կոնյակների գծով փաստացի կորստի (բնական կորստի) նորմաները»:
2. Նախարարության սննդի և վերամշակող արդյունաբերության գլխավոր վարչությանը (Ս. Գրիգորյան)` եռօրյա ժամկետում «Հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցվող կոնյակի սպիրտների և կոնյակների գծով փաստացի կորստի (բնական կորստի) նորմաները» ներկայացնել ՀՀ պետական եկամուտների նախարարություն` համաձայնեցման և ՀՀ արդարադատության նախարարություն` պետական գրանցման, համաձայն ՀՀ կառավարության 1996 թվականի հունվարի 15-ի «Գերատեսչական նորմատիվ ակտերի պետական գրանցման կարգի մասին» N 13 որոշման:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել նախարարի տեղակալ Լ. Ռուխկյանին:

Ն Ո Ր Մ Ա Ն Ե Ր

ՀԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱԽԱՌՆ ԵԿԱՄՏԻՑ ՆՎԱԶԵՑՎՈՂ ԿՈՆՅԱԿԻ ՍՊԻՐՏՆԵՐԻ ԵՎ ԿՈՆՅԱԿՆԵՐԻ ԳԾՈՎ ՓԱՍՏԱՅԻ ԿՈՐՄՏԻ (ԲՆԱԿԱՆ ԿՈՐՄՏԻ)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն նորմատիվ ակտը մշակված է հիմք ընդունելով «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21 հոդվածը և սահմանում է կոնյակի սպիրտների և կոնյակների պահպանման, հասունացման, հարստացման և տեղափոխման ընթացքում առաջացող բնական կորուստների թույլատրելի սահմանային նորմաները (չափերը):

2. Կոնյակի սպիրտի և կոնյակի բնական կորուստները հետևանք են դրանցում ընթացող ֆիզիկաքիմիական պրոցեսների և օդերևութաբանական գործոնների ազդեցության, տրանսպորտային միջոցների օգտագործման, ինչպես նաև պահպանման ժամանակ կոնյակի սպիրտների և կոնյակների որակական ու քանակական պարամետրերի փոփոխություններից (պակասորդից) առաջացած կորուստների:

3. Բնական կորուստներին չեն դասվում կոնյակի սպիրտների և կոնյակների պահպանման, հասունացման, հարստացման և տեղափոխման ընթացքում ստանդարտների, տեխնիկական պայմանների, տեխնիկական շահագործման և պահպանման կանոնների, ինչպես նաև տեխնոլոգիական պահանջների խախտման հետևանքով առաջացած կորուստները:

4. Բնական կորուստները արձանագրվում են և ենթակա են դուրսգրման սահմանված կարգով իրականացված գույքագրումների արդյունքների փաստացի տարբերությունների չափով, բայց ոչ ավելի, քան թույլատրելի սահմանային նորմաները:

II. ԿՈՆՅԱԿԻ ՍՊԻՐՏՆԵՐԻ, ՍՊԻՐՏԱՎՈՐՎԱԾ ԶՐԵՐԻ ԵՎ ԿՈՆՅԱԿՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՈՒՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՋԱՑՈՂ ԿՈՐՈՒՄՏՆԵՐԻ ՆՈՐՄԱՆԵՐԸ

1. Կոնյակի սպիրտների, սպիրտավորված ջրերի և կոնյակների բնական կորուստի չափերը պահպանման և հասունացման ընթացքում հաշվարկվում են դրանց մեջ պարունակվող ջրազուրկ սպիրտի միջին ամսական քանակից (ծավալից): Ամսվա նորմատիվ կորուստները որոշվում են տարեկան նորմաները բաժանելով 12-ի: Պահպանման և հասունացման պրոցեսում գտնվող կոնյակի սպիրտների, սպիրտավորված ջրերի և կոնյակների միջին ամսական քանակը որոշվում է մեկ ամսվա օրական մնացորդների գումարը բաժանելով ամսվա օրերի քանակին:

2. Կոնյակի սպիրտների առաջին և երկրորդ տարվա պահպանման և հասունացման ընթացքում ընդունված բնական կորուստների նորմաները բոլոր տեսակի տարաներում նվազում են երրորդ տարվա հասունացման համար 5%-ի, իսկ չորրորդ տարվա հասունացման համար 10%-ի չափով: Հետագա տարիների հասունացման բնական կորուստները պահպանվում են չորրորդ տարվա կորուստի չափով:

Օրինակ՝ մինչև 70 դալ տարողությամբ կաղնե տակառում կոնյակի սպիրտի պահպանման և հասունացման ընթացքում բնական կորուստը կազմում է՝

-երրորդ տարվա համար՝	$4,2 - (4,2 \times 5) : 100 = 3,99\%$,
-չորրորդ տարվա համար՝	$3,99 - (3,99 \times 10) : 100 = 3,59\%$,
-հինգերորդ տարվա համար՝	3,59%,
-վեցերորդ տարվա համար՝	3,59% և այլն

(2-րդ կետը խմբ. 09.09.02 N 238-Ն)

III. ԿԱՂՆԵ ՏԱԿԱՌՆԵՐՈՒՄ ԿՈՆՅԱԿԻ ՍՊԻՐՏՆԵՐԻ ԵՎ ՍՊԻՐՏԱՎՈՐՎԱԾ ՋՐԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐՎԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՈՒՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՋԱՑՈՂ ԿՈՐՈՒՄՏՆԵՐԻ ՆՈՐՄԱՆԵՐԸ

(%-ներով՝ կոնյակի սպիրտներում, սպիրտավորված ջրերում պարունակվող ջրազուրկ սպիրտի ընդհանուր քանակի նկատմամբ)

Տակառնների տարողությունը	Մինչև 70 դալ	70-150 դալ	150 դալ և ավելի	մինչև 120 դալ բացօթյա պայմաններում
Կորուստների նորմաները (%)	4,2	2,8	2,5	7,0

IV. ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՈՒՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՂՆԵ ՏԱԿԱՌՆԵՐՈՒՄ ԿՈՆՅԱԿԻ ՍՊԻՐՏՆԵՐԻ ԵՎ ՍՊԻՐՏԱՎՈՐՎԱԾ ՋՐԵՐԻ ՆԵՐՇԾՄԱՆ ԿՈՐՈՒՄՏՆԵՐԻ ՆՈՐՄԱՆԵՐԸ*

(%-ներով՝ կոնյակի սպիրտներում, սպիրտավորված ջրերում պարունակվող ջրազուրկ սպիրտի ընդհանուր քանակի նկատմամբ)

Տակառններում, որոնք չեն օգտագործվել կոնյակի սպիրտի կամ կոնյակի համար**՝	1,2%
Տակառններում, որոնք օգտագործվել են կոնյակի սպիրտի կամ կոնյակի համար**՝	0,5%

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.

*) Նշված նորմաները միանգամայն են, կիրառվում են տակառներում կոնյակի սպիրտի և սպիրտավորված ջրերի լցման ժամանակ և ներծծման արդյունք են:

**) Նոր, չօգտագործված տարողությունների թվին են պատկանում այն տակառները, որոնց տակառատախտակից կորզվել է սպիրտը և որոնք 4 ամսից ավելի եղել են դատարկ:

Կոնյակի սպիրտի կամ կոնյակի համար օգտագործված են համարվում այն տարողությունները, որոնք դատարկվել են կոնյակի սպիրտից կամ կոնյակից ոչ ավելի, քան 4 ամսվա ընթացքում:

V. ՄԵՏԱՂՅԱ ՊԱՀԱՄԱՆՆԵՐՈՒՄ ԿՈՆՅԱԿԻ ՍՊԻՐՏՆԵՐԻ, ՍՊԻՐՏԱՎՈՐՎԱԾ ՋՐԵՐԻ ԵՎ ԿՈՒՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՀԱՍՈՒՆԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՋԱՑՈՂ ԿՈՐՈՒՄՏՆԵՐԻ ՆՈՐՄԱՆԵՐԸ

1. Առաջին և երկրորդ տարվա հասունացման համար (հաշված այն պահից, երբ կոնյակի սպիրտը թորելուց հետո լցվել է տարաների մեջ, %-ներով կոնյակի սպիրտներում, սպիրտավորված ջրերում և կոլերում պարունակող ջրազուրկ սպիրտի նկատմամբ)՝ 0,65%:

2. Թթվածնով կոնյակի սպիրտի հարստացման ժամանակ առաջացող կորուստների նորմաները կազմում են տարողությունների մեջ գտնվող ջրազուրկ սպիրտի քանակի 0,1%-ից ոչ ավելի:

3. Արձնապատ մետաղյա պահամաններում կոնյակի սպիրտների կաղնե տակառատախտակներում ներծծման կորուստների նորմաները կազմում են՝

ա) առաջին լցման ընթացքում կոնյակի սպիրտների կորուստների նորմաները հաշվարկվում են հետևյալ բանաձևով՝

$$L = F \times 0.55\%$$

որտեղ՝

L - սպիրտի կորուստն է (ջրազուրկ սպիրտ, լիտր)

F- բացարձակ չոր տակառատախտակների քաշը (կգ)

0.55 - 1 կգ բացարձակ չոր տակառատախտակներում ներծծվող

սպիրտի քանակը (ջ.ս.լ),

բ) երկրորդ և դրան հաջորդող լցման ընթացքում կոնյակի սպիրտների կորուստների նորմաները կազմում են տարողություններում առկա ջրագուրկ սպիրտի քանակի 0,4 %-ը:

(3-րդ կետը փոփ. 09.09.02 N 238-Ն)

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝

Տակառատախտակների բացարձակ չոր քաշը որոշվում է 105° C ջերմաստիճանի պայմաններում տակառատախտակների 3-ից ոչ պակաս նմուշի մոտ 100 գր. զանգվածը հաստատուն քաշի հասցնելով:

VI. ԿՈՆՅԱԿՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՈՒՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՋԱՑՈՂ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՆՈՐՄԱՆԵՐԸ

(%-ներով՝ մեկ տարվա համար, հաշվարկված կոնյակում պարունակվող ջրագուրկ սպիրտի նկատմամբ)

Տարաների տեսակները և տարողությունները	Կաղնե տակառներում՝ (մինչև 150 դալ)	Կաղնե տակառներում՝ (150 դալից ավելի)	Արձնապատ մետաղյա պահամաններում
Կորուստների նորմաները (%)	2,5	2,0	0,5

Կոնյակների ներծծումը փայտանյութում էտկուպաժային պահպանման և հասունացման ընթացքում կազմում են՝ (%-ներով՝ կոնյակում պարունակող ջրագուրկ սպիրտի նկատմամբ)

Տակառներում (ծոչка)՝ նախկինում կոնյակով լցված՝ 0,2%
Տակառներում (ծյր)՝ նախկինում կոնյակով լցված՝ 0,15%

VII. ԿՈՆՅԱԿԻ ՍՊԻՐՏՆԵՐԻ ԵՎ ԿՈՆՅԱԿՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՌԱՋԱՑՈՂ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՆՈՐՄԱՆԵՐԸ

Տրանսպորտային միջոցը և տարայի տիպը	Բնական կորուստների առավելագույն նորմաները տեղափոխման ընթացքում արտադրանքի ընդհանուր ծավալի նկատմամբ՝ %-ներով	
	Յուրաքանչյուր օրվա համար	Անկախ ճանապարհին գտնվելու ժամանակահատված
1. Երկաթուղային և ջրային տրանսպորտով կաղնե տակառներում (ներառյալ բեռնումը և բեռնաթափումը)	0,03*	
2. Երկաթուղային և ջրային տրանսպորտով մետաղյա տարաներում (ներառյալ բեռնումը և բեռնաթափումը)	0,007	
3. Երկաթուղային ցիստեռններում	0,0055	
4. Ավտոմոբիլային տրանսպորտով կաղնե տակառներում (ներառյալ բեռնումը և բեռնաթափումը)		0,10
5. Ավտոմոբիլային տրանսպորտով մետաղյա տարաներում (ներառյալ բեռնումը և	0,008**	

բեռնաթափումը)		
6. Ավտոմոբիլային ցիստեռններում		0,044

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝

*) Արտադրանքը ճանապարհին ավելի, քան 8 օր մնալու դեպքում բնական կորուստների առավելագույն նորմաները հաշվվում են ոչ ավելի, քան 0,24 %:

**) Արտադրանքը ճանապարհին ավելի, քան 10 օր մնալու դեպքում՝ ոչ ավելի, քան 0,08 %: